

## ՆՈՐ ՄՏԱՅԱՆԻ ԳՐԲԵՐ

Սմբատ Շահազիզեանից ստացել ենք նրա «Յօրեւեանի Տարե-  
դարձ» գրքոյկի ուղղած թերթը: Պ. Շահազիզեանը իւր գիրքը  
տպագրելիս անուշադրութեամբ մի մեծ սխալ է արել, այն է խօ-  
սելով մեր գպրոցների հոգաբարձուների մասին, անցեալում նո-  
ցա գործունէութեան չափը որոշելու համար, մի մասնաւոր մար-  
դու նամակից քաղել է և մեր հոգաբարձուների գործերի նկա-  
րագրութիւնը իւր գրքի մէջ գրել, որպէս զի համեմատի անցեալ  
ժամանակը ներկայի հետ և ցոյց տայ ներկայի առաւելութիւնը:  
Բայց գժբաղդաբար տպագրութեան մէջ բաց են թողնուել հա-  
մեմատող տողերը, վերջում նա նկատելով այդ, նորից տպել է  
տուել 65 և 66 էջերը և ուղարկել ամեն տեղ, նաև Արարատի  
խմբագրութեանը, որպէս զի փոխեն սխալը ուղղի հետ: Այդ մա-  
սին տես նրա նամակը «Տարագի» 1893 թ. № 31.

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (ամ-  
բողջութեամբ). կազմեց Ն. ՄԵԼԻՔ—ԹԱՆ-  
ԳԵԱՆ. ԸՆԴՀ. 1893.

Գրքիս հեղինակը իւր յառաջաբանի մէջ յայտնում է, որ այժ-  
մեան աշխարհաբար քերականութիւնները չեն կարողանում իբրև  
ձեռնարկ ծառայել աշակերտների ձեռքում աշխարհաբար լեզուն  
լաւ սովորելու համար, ուստի կարիք է դրացել «սուղ ժամա-  
նակում» կազմել իւր գասագիրքը: Մենք հարցնում ենք ի՞նչն  
է ստիպել հեղինակին և նա ի՞նչպէս է իրան թոյլ տուել մի  
այնպիսի ձեռնարկ կազմելիս, ինչպէս «քերականութիւն» է՝ շտա-

պիւ: Միթէ՞ նա կարծում է մեր ուսումնարանները մեծ վնաս կրած կլինէին, եթէ նրա ձեռնարկը մի քանի ամիս ուշ դուրս կար, չէ՞ որ այն ժամանակ գիրքը աւելի մշակուած, աւելի կատարեալ լինելով համեմատաբար մեծ օգուտներ կտար:

Ահա այդ շտապման հետեանքն է ի միջի այլոց նաև այն, որ մի փոքրիկ՝ 116 էջից բաղկացած գրքոյկում մեծ քանակութեամբ տպագրական սխալներ են մտել, հետևապէս դասատու ուսուցիչը ստիպուած պիտի լինի շարունակ սրբագրիչի պաշտօն կատարել: Եթէ ուրիշ տեսակ տպագրութեանց մէջ ճարահատեալ տանում ենք տպագրական սխալներ, նոյնը միանգամայն աններելի է մանուկների ձեռքը տրուելիք դասագրքերում:

Ով հանդէս է դուրս գալիս ուրիշին մի բան սովորցնելու, նամանաւանդ լեզու, բնականաբար պահանջում ենք, որ նա ինքը ամենից առաջ լաւ իմանայ «կանոնաւոր խօսելու, ուղիղ գրելու և կարդալու կանոնները»: Ասկայն այդ պայմանները ես չեմ գրտնում հեղինակի մի քանի տողից բաղկացած յառաջաբանի հետեալ պարբերութեան մէջ էջ. 4: «Աշխարհաբարը զարգացման աստիճանի վերայ գտնուելով, նորանոր ձևեր, ժամանակներ մտցնելով իւր մէջ, իբրև կանոն ընդունւում են, այն ինչ անցեալներում կազմուած քերականութիւնների մէջ չկան այդ ձևերը»: Կամ մի ուրիշ տեղ էջ 6. «Եթէ մի քանի նախադասութիւններ միմեանց ետևից ասենք առանց ձայնի և գրի միջոցաւ բաժանելու, այն ժամանակ մտքերն կշփոթենք. . . : Կարծեմ դժուար է մի պարզ միտք աւելի շփոթ յայտնել, քան այստեղ մանուկը ի՞նչ պիտի հասկանայ ձայն և գիր ասելով: Տեսէք թէ նա էջ 17. ինչպէս է որոշում գոյական անունը. «Կան այնպիսի բառեր, որոնք արտաբերելիս իմանում ենք որ ցոյց է տալիս մի իր, մի առարկայ, որ աշխարհումս կայ: Մենք աւելորդ ենք համարում նման օրինակներ աւելի կուտակել, թող հետաքրքրուող ընթերցողը վերցնի Պ. Մելիք—թանգեանի գիրքը և կարգայ հէնց նրա ընդամենը մի էջից բաղկացած յառաջաբանը, այն ժամանակ նա հեշտութեամբ կհամաձայնի մեզ հետ, որ այդ տեսակ լեզու գործածող անձը, թէև նա շատ լաւ էլ հասկանա-

լիս լինի քերականութեան բոլոր կանոնները, նրա նրբութիւնները, իրան թոյլ չպիտի տայ քերականութեան դասագիրք կազմել քերականութեան արուեստը, գիտութեան ուրիշ շատ ճիւղերի նման իւր ծագումով և զարգացմամբ դարձեալ պարտական է յունական հանճարեղ ազգին, որ սովետտների ժամանակից սկսեց առանձին ուշագրութիւն դարձնել լեզուի կանոնների ուսումնասիրութեան վրայ, իսկ աղէքսանգրիան շրջանում քերականութեան արուեստը իւր զարգացման ամենաբարձր աստիճանին հասցրեց: Քերականութեան ուսումնասիրութիւնը համարեա անփոփոխ մնաց մինչև անցեալ դարը, երբ մի կողմից դասական լեզուների ուսումնասիրութեամբ, մանաւանդ Ֆրանսիայում, մեծ զարկ ստացաւ, իսկ միւս կողմից մեր դարում՝ գլխաւորապէս Գերմանիայում: Համեմատական լեզուագիտութեամբ: Ահա այս վերջին գիտութեան շնորհիւ քերականութեան վերայ աստիճանաբար նոր հայեացքներ առաջացան և մշակուեցին, ըստ այնմ էլ փոխուեց նրա ուսումնասիրութեան եղանակը: Պատմութիւնից քաջ յայտնի է թէ ինչից դրդուած սովետտները ուշագրութիւն դարձրին լեզուի մշակութեան վրայ, նոքա հասկացան որ լեզուի կանոնների ուսումնասիրութիւնը իրանց ձեռքը կտայ այն զօրեղ զէնքը, որով կարելի է հակառակօրդին վիճաբանութեանց ժամանակ նեղը լծել, բառերը քերականօրէն ճիշտ, իսկ մոքով երկդիմի շարահարելով վիճաբանողին շփոթեցնել: Եւ այդ որոշ ձգտման էլ ենթարկուեց լեզուի կանոնների մշակումն, նոցա համար լեզուի քերականութիւնը մի տեսակ տրամաբանութիւն էր և երկու գիտութեանց մէջ էլ սերտ կապ հաստատուեց: Այդ հայեացքը մնաց տիրապետող մինչև վերջին մի քանի տասնեակ տարիները, երբ համեմատական լեզուագիտութեան շնորհիւ խորը զննելով լեզուների ծագումը, նրա զարգացումը, անկումը, գտան որ սխալ է հին ուղղութիւնը, որ լեզուն էլ օրգանական երևոյթ է, որին լաւ հասկանալու համար ոչ թէ միայն նրա ներկայ դրութիւնը պիտի ի նկատի առնուի, այլ ուսումնասիրուի նրա ամբողջ կեանքը, առանձին առանձին գրուի իւրաքանչիւր բառի, դարձուածի կենսագրութիւնը, որոնց միացմամբ կարելի կլինի լեզուի ամբողջական

պատկերը ներկայացնել: Ուսումնասիրութեան այդ եղանակը գերմանացիք կոչում են *genetisch-historische Betrachtung*, որ ասել է. քննել լեզուի ծագումը և պատմութիւնը: Որինակով որոշենք թէ ինչ է հասկացում փերոնշանակեալ պահանջի համաձայն ուսումնասիրել լեզուի երևոյթները. օր. յարաբերական նախագասութիւնը բաժանում է գլխաւորից ՈՐ յարաբերականով. մենք որոշելով ՈՐ-ի ծագումը, այն է գտնելով նրա իսկական արմատը, արմատի նշանակութիւնը, պատմաբանօրէն քննում ենք, թէ նա ինչպէս է փոխուել, ինչպէս մի տեսակ որոշիչ բառ է դարձել գլխաւոր և երկրորդական նախագասութեան մէջ, թէ ինչպէս նա ինքն է պատճառ, որ սկզբնական երկու համահաւասար, մէկը միւսից ոյժով ոչնչով չտարբերուող նախագասութիւններ յետոյ միմեանց են ենթարկուել և վերջապէս թէ ինչու ՈՐ-ից յետոյ բառերի շարայարութիւնը ժամանակի եղանակի գործածութիւնը անպատճառ տուածի համաձայն պիտի լինի և ոչ այլ կերպ: Այդ պայմանները իմանալուց յետոյ մենք պագարում ենք քերականական կանոնների վրայ նայել իրրեւ անկապ պատահական երևոյթների վրայ, որ պէտք է միայն յիշողութեան ոյժի շնորհիւ մտքներումս մի կերպ պահենք, որպէս զի գրելիս, կամ խօսելիս սխալ չանենք:

Բայց որովհետեւ այդ նոր և միանգամայն ուղիղ հայեացքը դեռ դժուարութեամբ է ընդհանրութիւն գտնում, մենք դեռ բնականաբար երկար ժամանակի ի նկատի առած ուրիշ շատ դժուարութիւններ ևս, ստիպուած կլինենք հետեւող լինել հին ուղղութեանը: Այդպէս է վարուել նաև Պ. Մելիք-Թանգեանը քանի որ առաջնորդ է ունեցել Հ. Այտնեանի քննական քերականութիւնը և մի քանի ռուսաց ձեռնարկներ: Մենք կտեսնենք թէ նոյն իսկ հին ուղղութեամբ ինչքան յաջողութիւն է ունեցել: